

**Կենսաբանություն, I ՓՈԻԼ
տևողությունը 60 րոպե
11-12-րդ դասարաններ**

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Յուրաքանչյուր թեստում առաջարկվում է 4 պատասխան: Ընտրեք միայն մեկը, որը, ըստ Ձեզ, առավել ճիշտ է և ամբողջական:

1. Վարսանդի ո՞ր մասից է զարգանում պտղապատը:

1. Սերմնասկզբնակից
2. Սերմնարանի պատերից
3. Սունակից
4. Սպիից

2. Թվարկած պտուղներից ո՞րն է չոր բազմասերմ պտուղ

1. Թևապտուղ
2. Ընկույզ
3. Սերմիկ
4. Տուփիկ

3. Ինֆուզորիայի միկրոնուկլեուսը պարունակում է քրոմոսոմների:

1. հապլոիդ հավաքակազմ
2. դիպլոիդ հավաքակազմ
3. տրիպլոիդ հավաքակազմ
4. պոլիպլոիդ հավաքակազմ

4. Ինչպե՞ս է շնչում գետի խեցգետինը.

1. մթնոլորտային թթվածնով
2. ջրում լուծված թթվածնով
3. տարբեր ձևերով՝ կախված ջրամբարի ադտոտվածության աստիճանից
4. տարբեր ձևերով՝ կախված տարվա եղանակից

5. Արյան հոսքը հեծանվորդի ոտքերի մկաններում.

1. ավելի բարձր է, որպեսզի մկանները ապահովվեն թթվածնով
2. ավելի ցածր է՝ որպեսզի չայտուցվեն ոտքերը
3. չի տարբերվում արյան ցանկացած այլ հոսքից, քանի որ ոտքերի արյան հոսքը հաստատուն է
4. կախված չէ մկանային բեռնվածության բնույթից

6. Արտաքին շնչառությունը (ներշնչումը և արտաշնչումը) դեկավարվում է նյարդային կենտրոնով, որը գտնվում է:

1. երկարավուն ուղեղում
2. հիպոթալամուսում
3. թալամուսում
4. գլխուղեղի կեղևում

7. Թռչունների առաջատար զգայարանն է՝

1. տեսողության զգայարանը
2. հոտառության զգայարանը
3. լսողության զգայարանը
4. շոշափելիքի զգայարանը

8. Էուկարիոտ բջիջներում տրանսկրիպցիա տեղի չի ունենում.

1. կորիզում
2. Գոլջիի ապարատում
3. միտոքոնդրիումներում
4. պլաստիդներում

9. Արյան նորմալ մակարդման համար անհրաժեշտ է վիտամին.

1. D
2. E
3. B₁₂
4. K

10. Նորմալում ընկերքավոր կաթնասունների ձվաբջիջը սկսում է կիսվել.

1. մարմնի խոռոչում
2. ձվատարում
3. արգանդում
4. ձվարանում

11. Բարձրակարգ բույսերի բջջապատի կազմի մեջ է մտնում.

1. միայն ցելյուլոզ
2. միայն ցելյուլոզ և պեկտիններ
3. ցելյուլոզ և խիտին
4. ցելյուլոզ, հեմիցելյուլոզ, պեկտիններ և սպիտակուցներ

12. Ծաղկավոր բույսերի բջջում բացակայում են.

1. ցենտրիոլները
2. միկրոխողովակները
3. միկրոֆիլամենտները
4. կորիզակը

13. Արիտոսիկ գործոններ է ներառում իր մեջ այնպիսի էկոլոգիական միավոր, ինչպիսին է.

1. կենսացենոզը
2. էկոհամակարգը
3. պոպուլյացիան
4. տեսակը

14. Կոշտ բջջապատ չունեն.

1. խմորասնկերի բջիջները
2. ոսկրային հյուսվածքի բջիջները
3. կեչու տերևի բջիջները
4. տուբերկուլյոզային ցուպիկի բջիջները

15. Կարիոտիպը՝

1. օրգանիզմի հատկանիշների ամբողջությունն է
2. օրգանիզմի գենների ամբողջությունն է
3. օրգանիզմի քրոմոսոմների ամբողջությունն է
4. քրոմոսոմների թվաքանակն է բջջում

Կարճ պատասխանով առաջադրանքներ

Լոբու ունդերի դեղին գույնը և սերմերի սև գույնը դոմինանտ հատկանիշներ են: Դեղին ունդերով և սև սերմերով բույսը խաչասերեցին կանաչ ունդերով և սպիտակ սերմերով բույսի հետ: F₁ սերդում ստացան 120 բույս, իսկ F₂ սերնդում՝ 1296 բույս: *Պատասխանեք 16-20 հարցերին*

16. Քանի՞ տիպի գամետ կարող է առաջացնել F₁ բույսը :

17. Քանի՞ F₁ բույսեր կարող են լինել հետերոզիգոտ :

18. Քանի՞ F₂ բույս կարող ունենալ նույնպիսի գենոտիպ, իչպիսին է F₁ բույսերի գենոտիպը:

19. Քանի՞ տարբեր գենոտիպեր կարող են ունենալ F₂ բույսերը:

20. Քանի՞ F₂ բույս կարող ունենալ դեղին ունդեր և սպիտակ սերմեր: